ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Տաջիկստանի Հանրապետության Կառավարության միջև գիտության, տեխնիկայի և տեղեկատվության բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Տաջիկստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով, որ գիտության, տեխնիկայի և տեղեկատվության բնագավառում համագործակցությունը երկկողմ հարաբերությունների և փոխշահավետ առևտրա-տնտեսական կապերի ողջ համալիրի բաղկացուցիչ մաս է,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա, կնպաստեն գիտության, տեխնիկայի և տեղեկատվության բնագավառներում համագործակցության զարգացմանը:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը բնական, հումանիտար, տեխնիկական գիտությունների, առաջավոր տեխնոլոգիաների, գիտական կադրերի պատրաստման, արդյունաբերական և մտավոր սեփականության պաշտպանության բնագավառներում:

Համագործակցության կոնկրետ ձևերը և պայմանները երկու կողմերի նախարարությունների, գերատեսչությունների, գիտական և գիտահետազոտական հիմնարկների, բուհերի, ընկերակցությունների և հիմնադրամների միջև կկարգավորվեն առանձին համաձայնագրերով, իրենց իրավասությունների շրջանակներում և ազգային օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով.

գիտատար տեխնոլոգիաների ստեղծման և յուրացման համատեղ գիտահետազոտական ծրագրերի և նախագծերի իրականացում,

գիտական աշխատանք կողմերի գիտահետազոտական հիմնարկներում, բուհերում, արխիվներում և գրադարաններում, ներառյալ դաշտային հետազոտությունները և էքսպեդիցիաները:

գիտատեխնիկական տեղեկատվության, փաստաթղթերի, գրականության և մատենագիտական հրատարակությունների փոխանակում,

համատեղ սեմինարների, գիտաժողովների և աշխատանքային հանդիպումների անցկացում,

գիտնականների, մասնագետների, դոկտորանտների և ասպիրանտների փոխանակում, փորձաշրջանի կազմակերպում,

սույն Համաձայնագրի իրականացումն ապահովող այլ փոխհամաձայնեցված ձևեր:

Հոդված 4

Համատեղ գիտական հետազոտությունների արդյունքների և գիտական հետազոտությունների ընթացքում ստացված այլ տեղեկատվության օգտագործման կարգը, ինչպես նաև արդյունաբերական սեփականության և հեղինակային իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կհամաձայնեցնեն Կողմերի համապատասխան մարմինների միջև, առանձին համաձայնագրերի կնքման ճանապարհով:

Հոդված 5

Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կարող են ստեղծել համատեղ հանձնաժողով սույն Համաձայնագրի իրականացման և Կողմերի փոխգործունեության համար հանձնարարականներ նախապատրաստելու համար:

Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերի պատասխանատու իրավասու մարմիններ են համարվում.

հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,

տաջիկական կողմից՝ Տաջիկստանի Հանրապետության գիտությունների ակադեմիան:

Հոդված 6

Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ և լրացումներ կատարել, որոնք կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող արձանագրություններով:

Սույն Համաձայնագրի իրականացման ընթացքում վեճերի կամ տարաձայնությունների ծագման դեպքում կողմերը դրանք կլուծեն փոխադարձ բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով:

Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամանակով և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը համապասխան ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ գրավոր չի հայտնի նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 2003 թվականի նոյեմբերի 25-ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, տաջիկերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ ծագելիս կօգտագործվի ռուսերեն տեքստը:

***Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2004 թվականի մայիսի 4-ից:**